SUT.am կայքի լրագրող Տիրայր Մուրադյանի և փոխվարչապետ Տիգրան Ավինյանի խորհրդական Գեորգի Մուրադյանի հարցազրույցի սղագրության հատված

Երևան, 15-ը հուլիսի, 2018թ.

-Դուք 5 տարով հաշվառվե՞լ եք որպես թմրամոլ:

-Այո, հաշվառվել եմ: Հետո տարել եմ առաջին մաքուրը (նկատի ունի՝ հետազոտության եզրակացությունը), և ինձ հաշվառումից հանել են:

-Դուք նարկոդիսպանսերում չեք հետազոտվե՞լ:

-Նարկոդիսպանսերում եմ հետազոտվել: Առաջինը մաքուր եմ հանձնել, երկրորդը՝ տվել է այսպես: Ես հետո բերել եմ, որ դատարանում այս բանից հրաժարվել են և սա է եղել ձեր առաջինը, սա էլ երկրորդն է եղել, բայց քանի որ ես կալանավորված եմ եղել, սա է հիմքը, և ինձ իրենք հանել են հաշվառումից:

-Որ փորձաքննության պատասխանը ներկայացրել եք հանե՞լ են, միայն դրա հիմքով հանե՞լ են:

-Ինձ այդպես ասեցին: Առաջինի հիման վրա:

-Միայն առաջին փորձաքննության հիման վրա հանե՞լ են հաշվառումից:

-Կարծում եմ, որ հա:

-Լա՞վ եք հիշում:

-Կարող է և չեն հանել, ես հետո չեմ հետաքրքրվել դրանով: Մի անգամ խնդիր էր եղել վարորդական իրավունքի վկայականի հետ…:

-Ո՞ր թվականին:

-Օդեսայում էի աշխատում... 3 կամ 4 տարի կամ 5 տարի առաջ: Ինձ ասեցին, որ սենց խնդիր կա: